ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ
Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր

ք. Կապան «08» հունվար 2025թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան- «Կապանի ԲԿ»ՓԲԸ բուժ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝ Սոնա Խաչատրյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ բժիշկ ռենտգենոլոգ
Մարիաննա Աբրահամյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ սոնոգրաֆիստ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Մրցույթը կազմակերպվել է www.eauction.armeps.am կայքի միջոցով, հակադարձ աճուրդը տեղի է ունեցել է հունվարի 07-ին ժամը 12:00-ին: Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 08.01.2025թ-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ:

2. Տեղեկություններ հայտերի բացման մասին

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8** ծածկագրով էլետրոնային աճուրդին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«ԷՄՀԱՐ»ՍՊԸ	08285951	ք.Երևան, Մամիկոնյանց փ. շ.29, բն.68	emharllc@gmail.com
2	Ար.Մեդտեխնիկա»ՍՊԸ	02604367	ք.Երևան, 0025, Հերացի փ.7	armedtechnicallc@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ դիմում-հայտարարություն, հայտի ապահովում բանկային երաշխիքի (հավելված 2) ձևով և համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի կազման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

Հանձնաժողովի կողմից գնահատվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքում և համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում:

- Հայտի ապահվման Հավելված 2-ում՝ բանկային երաշխիքում, արձանագրվել է հրավերի պահանջներին անհամապատասխանություն:

Հրավերով սահմանված է.

***եթե ընթացակարգը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի (աշխատանքի կամ ծառայության) գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը, ապա «իննսուն աշխատանքային օր» բառերը փոխարինվում են «մեկ հարյուր քսան աշխատանքային օր» բառերով:*

«ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի ներկայացրած բանկային երաշխիքում «իննսուն աշխատանքային օր»բառերը չի փոխարինվել «մեկ հարյուր քսան աշխատանքային օր» բառերով: Ստացվում է, որ բանկային երաշխիքը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն.

« ...4) Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, **կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.»

Արձանագրված անհամապատասխանությունը շտկման ենթակա չէ:

- Համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան: Հրավերով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդել, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով :

Սակայն «ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում են առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը, արտադրողի անվանումը և առաջարկվող ապրանքի հստակ տեխնիկական բնութագիրը, որի փոխարեն նշված է հրավերից պատճենահանված տեխնիկական բնութագիրը:

Ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունները ենթակա են շտկման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Չափա-բաժնի համար	Հրաղեց-ած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«ԷՄՀԱՐ» ՍՊԸ	199000000	199000000	0%	199000000	162000000	0%	162000000
1	2	«Ար.մեդտեխնիկա» ՍՊԸ	199000000	198970000	0%	198970000	165000000	0%	165000000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

1. 19.12.2024թ-ին համակարգի միջոցով հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին ներկայացվել է պարզաբանում՝

Հարցում՝

«Հարգելի գործընկեր «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիկ համալիրի ձեռք բերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ տեխնիկական բնութագրում նշված է Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր Համալիրը պիտի լինի նոր, չօգտագործված, ոչ շուտ, քան 2024թ. արտադրության , որը իրենից անորոշ ձևակերպում է պարունակում, Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ պարզաբանել 1. Արդյոք պատվիրատուի համար ընդունելի կլինի Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր, որը նոր է , չօգտագործված և արտադրվել է մինչև 2024թվականը :»

Պարզաբանում՝

«Հարգելի գործընկեր համակարգչային տոմոգրաֆիկ համալիրը պետք է լինի նոր, չօգտագործված և ինչպես հրավերում է նշված ոչ շուտ, քան 2024թ. արտադրության:»

2. 23.12.2024թ-ին համակարգի միջոցով հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին ներկայացվել է պարզաբանում՝

Հարցում՝

«Հարգելի գործընկեր «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիկ համալիրի ձեռք բերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ տեխնիկական բնութագրում նշված է Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր Համալիրը պիտի լինի նոր, չօգտագործված, ոչ շուտ, քան 2024թ. արտադրության: Խնդրում ենք պարզաբանել 1. Ի՞նչով է պայմանավորված վերոգրյալ համալիրի արտադրության տարեթվի՝ ոչ շուտ, քան 2024թ. արտադրության չափորոշիչի իմպերատիվ խստրական պահանջ դնելը, այն պարագայում, երբ չկա երաշխիքային սպասարկման խնդիր, քանի որ երաշխիքը ըստ հրավերի՝ << երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը>>, արդեն իսկ սահմանված է: 2. Առաջարկում ենք վերոգրյալ պահանջի՝ <<ոչ շուտ, քան 2024թ. արտադրության>> սահմանափակումը վերացնել:»

Պարզաբանում՝

«Հարգելի գործընկեր, չենք կարծում, որ 2024 թվականի պահանջը խստրական է, քանի որ կարծում ենք բոլոր արտադրողներն էլ կարող են ապահովել այս պահաջի կատարումը, հարկ եմ համարում նշել, որ բացի երաշխիքային սպասարկումից կա նաև հետերաշխիքային սպասարկում և որքան սարքը հին եղավ, այդքան դժվար է լինելու սարքի սպասարկումը՝ օրինակ պահեստամասերի առկայությունը, քանի որ արտադրողները հնարավոր է այլևս չարտադրեն դրանք: Բացի վերոգրյալը հարկ եմ համարում նշել, որ ձեռք է բերվում բժշկական սարքավորում, որն անմիջական կապ ունի մարդու առողջության հետ և հաշվի

առնելով բժշկական սարքերի կատարելագործումը տարեց տարի, Պատվիրատուն օբյեկտիվորեն ցանկանում է ձեռք բերել առավել նոր տեխնոլոգիաներով աշխատող բժշկական սարքավորում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պահանջը խտրական չէ և այն ենթակա չէ վերացման:»

3. 24.12.2024թ-ին համակարգի միջոցով հրավերի վերաբերյալ ստացվել է հարցում, որին ներկայացվել է պարզաբանում՝

Հարցում՝

«Հարգելի գործընկեր «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիկ համալիրի ձեռք բերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ տեխնիկական բնութագրում նշված է Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր Համալիրը պիտի լինի նոր, չօգտագործված, ոչ շուտ, քան 2024թ. արտադրության ,, Գնումների մասին,,ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնման առարկայի բնութագրերը՝ 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար. 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը. 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն, որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի համաձայն Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում. Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ պարզաբանել 1. Պատվիրատուի օբյեկտիվորեն հիմնավորված որ կարիքով է պայմանավորված գնման առարկայի ոչ շուտ, քան 2024թ. արտադրության պահանջը, որը չի կարող բավարարել միևնույն տեխնիկական բնութագրով 2023թվականի արտարության ապրանքը 2. Միաժամանակ ցանկանում ենք տեղեկացնել, որ համանման ապրանքների _____ծածկագրերով գնման գործընթացներով սահմանված չի եղել գնման առարկայի արտադրության տարեթիվ:»

Պարզաբանում՝

Հարգելի գործընկեր, չենք կարծում, որ 2024 թվականի պահանջը խտրական է, քանի որ կարծում ենք բոլոր արտադրողներն էլ կարող են ապահովել այս պահանջի կատարումը, հարկ եմ համարում նշել, որ բացի երաշխիքային սպասարկումից կա նաև հետերաշխիքային սպասարկում և որքան սարքը հին եղավ, այդքան դժվար է լինելու սարքի սպասարկումը՝ օրինակ պահեստամասերի առկայությունը, քանի որ արտադրողները հնարավոր է այլևս չարտադրեն դրանք: Բացի վերոգրյալը, հարկ եմ համարում նշել, որ ձեռք է բերվում բժշկական սարքավորում, որն անմիջական կապ ունի մարդու առողջության հետ և հաշվի առնելով բժշկական սարքերի կատարելագործումը տարեց տարի, Պատվիրատուն օբյեկտիվորեն ցանկանում է ձեռք բերել առավել նոր տեխնոլոգիաներով աշխատող բժշկական սարքավորում: Իսկ ինչ

վերաբերվում է այլ գնման գործընթացներում գնման առարկայի արտադրության տարեթիվ չնշելուն, ապա կարող եմ տեղեկացնել, որ նմանատիպ գնման առարկայի ձեռք բերման գնման գործընթացներում (ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2024/80 , ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/73, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/29, ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/16) ապրանքի տեխնիկական բնութագրերում նշված է «Ապրանքը պետք է լինի արտադրված ոչ ուշ քան պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամսվա ընթացքում», և հաշվի առնելով այն, որ ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով մրցույթը կազմակերպվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա և մրցույթի արդյունքում պայմանագիր կկնքվի հավանաբար 2025թ-ի հունվարին, իսկ ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում 1-6 ամսվա ընթացքում՝ համաձայնագիր, ապա ստացվում է, որ ապրանքը արտադրված պետք է լինի համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 13-ից 18 ամսվա ընթացքում, որը ավելի երկար է, քան 12 ամսվա պահանջը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պահանջը խտրական չէ և այն ենթակա չէ վերացման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման և գնահատման նիստը շարունակել 2025թ. հունվարի 09-ին ժամը 12:00-ին ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝0

Հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է հունվարի 09-ին ժամը 12:00-ին ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 հասցեում, որին մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մանասյան- «Կապանի ԲԿ»ՓԲԸ բուժ.գծով տեղակալ
հանձնաժողովի անդամներ՝ Սոնա Խաչատրյան - «Կապանի ԲԿ»ՓԲԸ բժիշկ ռենտգենոլոգ
Մարիաննա Աբրահամյան-«Կապանի ԲԿ»ՓԲԸ սոնոգրաֆիստ
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան- գնումների համակարգող

9. Գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:
Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը « ...Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, **կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան...»** գնահատող հանձնաժողովը **որոշեց մերժել «ԷՄՀԱՐ»ՍՊԸ-ի հայտը** և հաշվի առնելով այս փաստը, ապրանքի ամբողջական նկարագիրը շտկելու հնարավորություն չի տրվել մասնակցին, քանի որ այդ շտկումը էական ազդեցություն չէր կարող ունենալ հանձնաժողովի կայացրած որոշման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Մյուս մասնակցի հայտը մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

11. Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մանասյան Վիրաբ

հանձնաժողովի անդամներ՝ _____ Խաչատրյան Սոնա

_____ Աբրահամյան Մարիաննա

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գրիգորյան Սահականուշ